

**ԴԵՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ**  
**(ՆԵՐԳԻՐ-ԹԵՐԹԻԿ)**  
**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՄԱՐ**  
**Դիագեպամ**  
**5 մգ և 10 մգ դեղահատեր**  
**Դիագեպամ**

**Ուշադիր կարդացեք ներդիր-թերթիկն ամբողջությամբ՝ նախքան դեղի ընդունումը, քանի որ այն պարունակում է կարևոր տեղեկատվություն:**

- Պահեք այս ներդիր-թերթիկը: Հնարավոր է այն կրկին կարդալու կարիք լինի:
- Եթե ունեք լրացուցիչ հարցեր, դիմեք բժշկի կամ դեղագետի:
- Այս դեղը բժիշկը նշանակել է անձամբ Ձեզ: Չի կարելի այն փոխանցել այլ անձանց: Դեղը կարող է վնասել նրանց, եթե նույնիսկ հիվանդության ախտանիշները համընկնում են:
- Եթե ի հայտ է եկել որևէ կողմնակի ազդեցություն, այդ թվում՝ նաև այնպիսիները, որոնք թվարկված չեն այս ներդիր-թերթիկի «Ինչպիսի կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ» 4-րդ բաժնում, կամ փոխվել է կողմնակի ազդեցության ծանրության աստիճանը, ապա խորհրդակցեք բժշկի կամ դեղագետի հետ:

**Ինչ բովանդակություն ունի այս ներդիր-թերթիկը**

1. Ինչ է Դիագեպամ դեղը և ինչի համար է այն կիրառվում:
2. Ինչ պետք է իմանալ Դիագեպամ դեղն ընդունելուց առաջ:
3. Ինչպես ընդունել Դիագեպամ դեղը:
4. Ինչպիսի կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ:
5. Ինչպես պահել Դիագեպամ դեղը:
6. Ինչ է պարունակում փաթեթը և այլ տեղեկություններ:

**1. ԻՆՉ Է ԴԻԱԳՁԵՊԱՄ ԴԵՂԸ ԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ԱՅՆ ԿԻՐԱՎՈՒՄ**

Դիագեպամը պատկանում է բենզոդիազեպիններ կոչվող դեղերի խմբին: Այն կիրառվում է անհանգիստ վիճակների, մկանային կծկանքի (սպազմ) և ջղաձգումների (ցնցումներ) բուժման համար:

**Դիագեպամը կիրառվում է հետևյալ դեպքերում.**

Չափահասներ

- Զրտնարտադրությամբ, դողով, տազնապի զգացողությամբ, սրտի զարկերի հաճախացմամբ, ինչպես նաև անքնությամբ (քնի խանգարմամբ) կամ հոգեկան խանգարումներով ուղեկցվող և հուզական վիճակ հանդիսացող՝ խիստ արտահայտված անհանգստության կարճատև (միայն 2-4 շաբաթ տևողությամբ) թերևսցման համար:
- Որպես մկանաապալարիչ՝ մկանային կծկանքի և ուղեղի կաթվածի (գլխուղեղի՝ շարժողական ակտիվության խանգարումներով և մկանային պնդությամբ կամ կարկամությամբ բնորոշվող ախտահարում) դեպքում:
- Էպիլեպսիայի բուժման համար (այլ դեղերի հետ համակցված կիրառում):
- Ալկոհոլի հանման ախտանիշներ ունեցող պացիենտների բուժման համար:
- Ատամնաբուժական միջամտությունների ժամանակ նյարդային պացիենտներին հանգստացնելու համար:

Երեխաներ

- Ուղեղային սպաստիկության (գլխուղեղը կամ ողնուղեղը ախտահարող հիվանդություններով կամ վնասվածքներով պայմանավորված վիճակ, որն ուղեկցվում է թուլությամբ, շարժումների համակարգման խանգարումներով, մկանային պնդությամբ և կարկամությամբ) արդյունքում առաջացած լարվածությունն ու դյուրագրգռությունը թուլացնելու համար:
- Տեսանուսի արդյունքում առաջացած մկանային ջղաձգումների բուժման համար (այլ դեղերի հետ համակցված կիրառում):

Վիրահատությունից առաջ դիագեպամը դեղային նախապատրաստման նպատակով կարող է նշանակվել չափահասներին և երեխաներին՝ հանգստացնելու և քնեցնելու համար:

**2. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԴԻԱԳՁԵՊԱՄ ԴԵՂՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ**

Մի՛ օգտագործեք Դիագեպամ դեղը և տեղեկացրեք բուժող բժշկին, եթե՝

- ունեք ավերգիա (գերզգայնություն) դիագնոզային, բենզոդիազեպինների կամ դեղի ցանկացած այլ բաղադրիչի նկատմամբ (դրանք թվարկված են ստորև՝ «Ինչ է պարունակում դեղի փաթեթը և այլ տեղեկություն» 6-րդ բաժնում),
- ունեք շնչառական խնդիրներ, որոնք կարող են լինել ծանր, օրինակ՝ դանդաղ և/կամ մակերեսային շնչառություն,
- ունեք գերակտիվություն կամ դեպրեսիա, որն ուղեկցվում է տագնապով կամ առանց դրա,
- ունեք վահեր (որոշակի առարկաներից կամ իրավիճակներից) կամ այլ հոգեկան հիվանդություններ,
- ունեք միասթենիա գրավիս (մկանների արագ թուլացմամբ կամ հոգնածությամբ բնորոշվող վիճակ),
- ունեք գիշերային ապնոէ (քնի խանգարում, որը բնորոշվում է շնչառության՝ քնի ընթացքում առաջացող կանգերով),
- ունեք լյարդային ծանր անբավարարություն,
- ունեք պորֆիրիա (մաշկի վրա բշտիկների առաջացմամբ, որովայնային ցավերով և նյարդային համակարգի ախտահարումներով բնորոշվող ժառանգական խանգարում),
- հղի եք կամ պլանավորում եք հղիություն (տե՛ս «Կիրառումը հղիության և կրծքով կերակրման շրջանում» բաժինը):

**Նախքան դիագնոզային ընդունումը խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղագետի հետ, եթե՝**

- անամնեզում առկա է ակոհոլիզմ կամ չարաշահում եք կախյալություն առաջացնող նյութերի կամ դեղերի կիրառումը,
- ունեք սրտի և թոքերի հետ կապված խնդիրներ կամ երիկամային սուր անբավարարություն,
- վերջերս ունեցել եք հարազատ մարդու կորուստ,
- ունեք արբումինի ցածր մակարդակ արյան մեջ,
- ունեք անձնային խանգարում,
- ունեք ուղեղի արյան շրջանառության խանգարում (արտերիոսկլերոզ),
- ունեք շնչառության դժվարացում,
- ծխում եք,
- ունեք դեպրեսիա,
- ի հայտ են գալիս մտքեր ինքնասպանության վերաբերյալ,
- անամնեզում առկա են էպիլեպսիա կամ ցնցումներ:
- Տարեցների մոտ դիագնոզային կարող է առաջացնել շփոթվածություն և մկանների թուլացում, ինչի արդյունքում պացիենտը կարող է վայր ընկնել ու վնասվածքներ ստանալ:

**Կիրառման հատուկ հրահանգներ և նախազգուշացումներ**

• **Հոգեկան կողմնակի ազդեցություններ**

Խորհրդակցեք բժշկի հետ, եթե ի հայտ են եկել հետևյալ կողմնակի ազդեցությունները՝ դյուրագրգռություն, գերակտիվություն, անհանգստություն, ագրեսիա, մոճավանջներ կամ հայուցինացիաներ: Նշված ազդեցություններն առավել հաճախ հանդիպում են երեխաների կամ տարեցների շրջանում:

• **Հիշողության մասնակի կամ ամբողջական կորուստ (ամնեզիա)**

Դիագնոզային ընդունման ընթացքում կարող է ի հայտ գալ հիշողության կորուստ: Այն հաճախ առաջանում է բարձր դեղաչափերի ընդունման դեպքում:

• **Կախյալություն**

Դիագնոզային ընդունման դեպքում առկա է կախյալության զարգացման ռիսկ, որը մեծանում է դեղաչափի բարձրացմանը և բուժման տևողության երկարացմանը զուգընթաց: Կախյալության ռիսկն առկա է նաև անամնեզում ակոհոլիզմ և թմրամոլություն ունեցող պացիենտների շրջանում: Հետևաբար, Դիագնոզային դեղը պետք է կիրառել հնարավորինս կարճատև:

• **Ընտելացում**

Տեղեկացրեք բուժող բժշկին, եթե դեղի ընդունումից մի քանի շաբաթ անց նկատում եք, որ այն չի ազդում այնպես, ինչպես բուժման առաջին շաբաթների ընթացքում:

• **Դեղի հանման համախտանիշ (աբստինենցիա)**

Դիագնոստիկական ընդունումը պետք է դադարեցնել աստիճանաբար: Դեղի նույնիսկ բուժիչ դեղաչափերի կարճատև կիրառման դեպքում կարող են ի հայտ գալ դեղի հանման ախտանիշներ (տե՛ս «**Եթե Դուք դադարեցնում եք Դիագնոստիկական ընդունումը**» 3-րդ բաժինը):

### **Դիագնոստիկական և այլ դեղերի միաժամանակյա կիրառում**

Միշտ տեղյակ պահեք բժշկին կամ դեղագետին, եթե ընդունում եք, վերջերս ընդունել եք կամ պատրաստվում եք ընդունել որևէ այլ դեղ՝ ներառյալ առանց դեղատոմսի ձեռք բերվածները:

Հատկապես կարևոր է առանձնացնել դիագնոստիկական և հետևյալ դեղերի միաժամանակյա կիրառումը.

- հակադեպրեսանտներ (ֆլուվոքսամին, ֆլուօքսետին),
- նեյրոլեպտիկներ, այդ թվում՝ կոգնատիվ (կիրառվում են հոգեկան խնդիրների բուժման համար),
- հակահիստամինային դեղեր (կիրառվում են ավերգիկ ռեակցիաների բուժման համար),
- ընդհանուր ազդեցությամբ անզգայացնողներ,
- սեդատիվ (հանգստացնող ազդեցությամբ) դեղեր,
- քնաբերներ (կիրառվում են քնի որակը բարելավելու նպատակով),
- էրիթրոմիցին (հակաբիոտիկ),
- մկանաապալարիչներ (սուքսամեթոնիում, տուբոկուրարին),
- որոշ ուժեղ ցավազրկողներ, այդ թվում՝ մորֆին (օփիոիդ). դիագնոստիկական հետ միաժամանակյա կիրառման դեպքում կարող է առաջանալ էֆորիա, ինչը կարող է ուժեղացնել այդ դեղերի ընդունումը շարունակելու ցանկությունը (կախյալություն), կամ հակառակը՝ կարող է զարգանալ արտահայտված քնկոտություն,
- բարբիտուրատներ, այդ թվում՝ ֆենոբարբիտալ (կիրառվում են էպիլեպսիայի և հոգեկան խանգարումների բուժման համար),
- զարկերակային բարձր ճնշումն իջեցնող դեղեր, միզամուղներ, նիտրատներ (կիրառվում են սրտային հիվանդությունների բուժման համար). դիագնոստիկական հետ միաժամանակյա կիրառման դեպքում հնարավոր է զարկերակային ճնշման կտրուկ իջեցում,
- թթվամարիչներ (անտացիդներ) (կիրառվում են ստամոքսահյուսվածքի թթվայնության իջեցման համար). այս դեղերը կարող են դանդաղեցնել դիագնոստիկական ներծծումը օրգանիզմում:

Այս դեղերի և դիագնոստիկական միաժամանակյա կիրառումը կարող է ազդել Ձեր հոգեկան վիճակի վրա, առաջացնել քնկոտություն, ընկճել շնչառությունը և իջեցնել զարկերակային ճնշումը:

- **Դիսուլֆիրամ** (կիրառվում է ալկոհոլային կախվածության բուժման համար). այս դեղի և դիագնոստիկական միաժամանակյա ընդունումը կարող է առաջացնել քնկոտություն և դանդաղեցնել դիագնոստիկական արտազատումը օրգանիզմից:
- **Հակաէպիլեպսիային դեղեր**, օրինակ՝ ֆենոբարբիտալ, ֆենիտոին և կարբամազեպին, նատրիումի վալպրատ. դիագնոստիկական կարող է փոփոխել այս դեղերի մակարդակներն արյան մեջ, ինչպես նաև փոփոխել ֆենիտոինի արդյունավետությունը:
- **Թեոֆիլին** (կիրառվում է ասթմայի և շնչառական այլ խանգարումների բուժման համար). այս դեղը կարող է արագացնել դիագնոստիկական արտազատումը օրգանիզմից, հետևաբար, թեոֆիլինի և դիագնոստիկական միաժամանակյա կիրառման դեպքում հնարավոր է վերջինիս ազդեցության նվազում:
- **Ցիմետիդին, օմեպրազոլ կամ էզոմեպրազոլ** (ստամոքսահյուսվածքի թթվայնությունն իջեցնող դեղեր). այս դեղերը կարող են դանդաղեցնել դիագնոստիկական արտազատումը օրգանիզմից:
- **Ռիֆամպիցին** (վարակների բուժման համար կիրառվող հակաբիոտիկ). այս դեղը կարող է արագացնել դիագնոստիկական արտազատումը օրգանիզմից, ինչի արդյունքում վերջինիս ազդեցությունը կարող է նվազել:
- **Ամրենավիր, ատազանավիր, ռիտոնավիր, դելավիրդին, էֆավիրենց, ինդինավիր, նելֆինավիր կամ սակվինավիր** (հակավիրուսային դեղեր), **ֆլուկոնազոլ, իտրակոնազոլ, կետոկոնազոլ կամ վորիկոնազոլ** (հակասնկային դեղեր). այս դեղերը կարող են դանդաղեցնել դիագնոստիկական արտազատումը օրգանիզմից, ինչի արդյունքում կողմնակի ազդեցությունների զարգացման ռիսկը բարձրանում է: Սա կարող է հանգեցնել քնկոտության առաջացմանը և շնչառության դժվարացման:

- **Իզոնիզացիա** (կիրառվում է տուբերկուլյոզի բուժման համար). այս դեղը կարող է դանդաղեցնել Դիագնոստիկ արտագատումը օրգանիզմից:
- **Ներքին ընդունման հակաբեդնավորիչներ**. այս դեղերը կարող են դանդաղեցնել դիագնոստիկ արտագատումը օրգանիզմից և ուժեղացնել դրա ազդեցությունը: Դիագնոստիկ և ներքին ընդունման հակաբեդնավորիչների միաժամանակյա ընդունման դեպքում կարող է առաջանալ առատ արյունահոսություն: Նշված դեղերի և դիագնոստիկ փոխազդեցության արդյունքում հակաբեդնավորիչ ազդեցությունը չի թուլանում:
- **Ցիտապրիդ** (կիրառվում է ստամոքս-աղիքային ուղու ֆունկցիոնալ խանգարումների բուժման ժամանակ). այս դեղը կարող է դանդաղեցնել դիագնոստիկ արտագատումը օրգանիզմից:
- **Կորտիկոստերոիդներ** (հակաբորբոքային դեղեր). այս դեղերը կարող են թուլացնել դիագնոստիկ ազդեցությունը:
- **Լևոդոպա** (կիրառվում է պարկինսոնիզմի բուժման համար). դիագնոստիկ կարող է նվազեցնել լևոդոպայի ազդեցությունը:
- **Վալպրոատթթու** (կիրառվում է էպիլեպսիայի և հոգեկան խանգարումների բուժման համար). այս դեղը կարող է դանդաղեցնել դիագնոստիկ արտագատումը օրգանիզմից և երկարացնել դրա ազդեցության տևողությունը:
- **Կետամին** (անզգայացնող դեղ). դիագնոստիկ ուժեղացնում է կետամինի ազդեցությունը:
- **Լոֆեքսիդին** (նպաստում է ափիոնային ցավազրկողներ ընդունման դադարեցմամբ պայմանավորված հանման ախտանիշների տանելիության բարելավմանը):
- **Նաբիլոն** (կիրառվում է սրտխառնոցի և փսխման բուժման համար):
- **Ալֆա-ադրենապաշարիչներ կամ մոքսոնիդին** (կիրառվում են զարկերակային բարձր ճնշման իջեցման համար):

**Դիագնոստիկ ընդունումը սննդի և ըմպելիքների հետ**

Չի կարելի պլոհոլ օգտագործել դիագնոստիկ բուժման ընթացքում: Ալկոհոլն ուժեղացնում է դիագնոստիկ սեղատիվ ազդեցությունը և կարող է առաջացնել արտահայտված քնկոտություն:

Թուրինջի (գրեյպֆրուտ) հյութը կարող է բարձրացնել դիագնոստիկ մակարդակն արյան մեջ: Եթե Դուք տարեց եք, ունեք լյարդի ցիռոզ կամ Ձեզ մոտ առկա է «Ինչ պետք է իմանալ դիագնոստիկ դեղն ընդունելուց առաջ» 2-րդ բաժնում թվարկված որևէ վիճակ, ապա թուրինջի հյութը կարող է մեծացնել դիագնոստիկ քնաբեր ազդեցությունը: Թվարկված վիճակներից որևէ մեկի առկայության դեպքում այդ մասին տեղեկացրեք բուժող բժշկին կամ դեղագետին:

Կոֆեին պարունակող ըմպելիքները կարող են թուլացնել դիագնոստիկ ազդեցությունը:

**Կիրառումը հղիության և կրծքով կերակրման շրջանում**

Մի՛ ընդունեք Դիագնոստիկ դեղը, եթե հղի եք կամ կրծքով կերակրում եք, կամ ենթադրում եք, որ հղի եք կամ պլանավորում եք հղիություն: Եթե Դիագնոստիկ դեղն ընդունում եք հղիության վերջին շրջանում կամ ծննդաբերության ժամանակ, ապա Ձեր երեխայի մարմնի ջերմաստիճանը կարող է իջնել, առաջանալ անհանգստություն և շնչառության դժվարացում: Եթե հղիության վերջին շրջանում դեղը կանոնավոր եք ընդունել, ապա Ձեր երեխայի մոտ կարող է զարգանալ դեղի համան համախտանիշ:

Խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղագետի հետ՝ նախքան որևէ դեղ ընդունելը:

**Ազդեցությունը ուշադրություն պահանջող գործողությունների վրա (փոխադրամիջոցների վարում, սարքավորումների հետ աշխատանք)**

Բացի այլ կողմնակի ազդեցություններից, դիագնոստիկ կարող է առաջացնել քնկոտություն, մոռացկոտություն, շարժումների համակարգման խանգարում, ինչը կարող է ազդել ամենօրյա գործունեության վրա (տե՛ս «Ինչպիսի կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ» 4-րդ բաժինը):

Հետևաբար, դեղն ընդունելու ընթացքում անհրաժեշտ է խուսափել փոխադրամիջոցներ վարելուց, որևէ մեխանիզմի հետ աշխատելուց կամ այնպիսի գործունեությունից, որի դեպքում կարող եք ենթարկվել վտանգի:

Դեղը կարող է առաջացնել քնկոտություն կամ գլխապտույտ, հետևաբար այն կարող է ազդել մեքենա վարելու Ձեր կարողության վրա:

- Եթե դիագնոզը տվյալ իրավիճակում բացասաբար է ազդում Ձեզ վրա, ապա մեքենա վարելն անթույլատրելի է:
- Եթե դեռ հայտնի չէ, թե դեղն ինչպես է ազդում Ձեզ վրա, ապա խորհուրդ չի տրվում այն ընդունելու ընթացքում մեքենա վարել:

### **Դիագնոզի բաղադրատարրերի վերաբերյալ կարևոր տեղեկություն**

Դիագնոզի դեղահատերը պարունակում են լակտոզա: Եթե բժիշկը երբևէ տեղեկացրել է, որ դուք որոշ շաքարների նկատմամբ անընկալունակություն ունեք, ապա մինչև դեղի ընդունումը խորհրդակցեք բժշկի հետ:

### **3.ԻՆՉՊԵՍ ԸՆԳՈՒՆԵԼ ԳԻԱՉԵՊԱՄ ԳԵՂԸ**

Միշտ անհրաժեշտ է դեղն օգտագործել բժշկի նշանակմանը համապատասխան: Մի՛ ընդունեք դիագնոզի 4 շաքարից ավելի երկար տևողությամբ: Եթե համոզված չեք, թե ինչպես պետք է դեղն ընդունել, դիմեք բուժող բժշկին կամ դեղագետին:

Դեղահատը պետք է ընդունել ամբողջությամբ՝ մեկ բաժակ ջրով:

### **Դեղաչափ**

#### **Չափահասներ**

- Անհանգստության կամ հոգեկան խանգարումների դեպքում դեղի թույլատրելի օրական դեղաչափը 5 մգ– 30 մգ է, որը բաժանվում է մի քանի ընդունումների:
- Անքնության դեպքում դեղի թույլատրելի օրական դեղաչափը 5 մգ– 15 մգ է, որն ընդունվում է քնելուց առաջ:
- Ուղեղային կաթվածի կամ սպաստիկ այլ վիճակների դեպքում դեղի թույլատրելի օրական դեղաչափը 5 մգ– 60 մգ է, որը բաժանվում է մի քանի ընդունումների:
- Մկանների կծկանքի դեպքում դեղի թույլատրելի օրական դեղաչափը 5 մգ– 15 մգ է, որը բաժանվում է մի քանի ընդունումների:
- Էպիլեպսիայի դեպքում դեղի թույլատրելի օրական դեղաչափը 2 մգ– 60 մգ է, որը բաժանվում է մի քանի ընդունումների:
- Ալկոհոլի հանման ախտանիշների թեթևացման նպատակով կիրառման դեպքում դեղի թույլատրելի օրական դեղաչափը 5 մգ– 20 մգ է, որն անհրաժեշտության դեպքում 2-4 ժամ անց կարելի է կրկնել:
- Ատամնաբուժական միջամտություններից առաջ դեղը կիրառվում է հետևյալ սխեմայով. 5 մգ՝ միջամտությանը նախորդող գիշերը՝ քնելուց առաջ, ապա 5 մգ՝ առավոտյան և 5 մգ՝ միջամտությունից 2 ժամ առաջ:
- Դեղային նախապատրաստման նպատակով կիրառման դեպքում դեղի թույլատրելի օրական դեղաչափը 5 մգ– 20 մգ է:

2 մգ դեղաչափի կիրառման դեպքում նպատակահարմար է օգտագործել 2 մգ դոզավորմամբ օշարակ կամ դեղահատեր թողարկման ձևը:

### **Երեխաներ**

Տվյալ դեղաձևը(դեղահատը) նախատեսված չի մինչև 6 տարեկան երեխաների կիրառման համար ( իրենց համար դեղահատի ներքին ընդունումը հանդիսանում է ոչ պատշաճ կիրառման ուղի, քանի որ իրենց մոտ դեղահատի կիրառումը այս ուղիով մեծացնում է դեղահատը ոչ ճիշտ ձևով կուլ տալու և խեղդվելու վտանգը): Կիրառումը երեխաների մոտ թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում:

Ուղեղի սպաստիկություն ունեցող երեխաների լարվածությունն ու գրգռվածությունը վերացնելու համար դեղի թույլատրելի օրական դեղաչափը 5 մգ - 40 մգ է, որը բաժանվում է մի քանի ընդունումների:

Եթե բժիշկը վիրահատական միջամտությունից առաջ Ձեր երեխային նշանակել է դիագնոզ, ապա դեղաչափը սովորաբար 2 մգ - 10 մգ է:

### **Տարեց կամ հյուծված պացիենտներ**

Տարեց և տկար պացիենտներն ավելի զգայուն են դիագնոստիկ ազդեցությունների, այդ թվում՝ շփոթվածության նկատմամբ: Հետևաբար, բուժող բժիշկը պետք է նշանակի ցածր դեղաչափ, որը չպետք է գերազանցի չափահասների դեղաչափի կեսը: Լյարդի կամ երիկամների խնդիրների առկայության դեպքում նույնպես դեղաչափը պետք է նվազեցնել:

**Եթե գերազանցել եք դեղաչափը՝ ավելի շատ դեղահատ եք ընդունել, քան թույլատրելի է**

Եթե Դուք (կամ որևէ մեկը) միաժամանակ շատ դեղահատեր եք ընդունել կամ կասկածում եք, որ երեխան դեղահատեր կույ է տվել, ապա դիմեք շտապօգնության մոտակա կայան կամ այդ մասին անհապաղ տեղեկացրեք բուժող բժշկին:

Դիագնոստիկ գերդեղաչափման արդյունքում կարող են ի հայտ գալ դանդաղաշարժություն և շարժումների համակարգման խանգարում, քնկոտություն կամ խորը քուն, խոսքի խանգարումներ, սրտի անկանոն կամ դանդաղ զարկեր, աչքերի անվերահսկելի շարժումներ, մկանային թուլություն կամ գրգռվածություն: Արտահայտված գերդեղաչափման արդյունքում կարող են առաջանալ կոմա (գիտակցության կորուստ), ռեֆլեքսների խանգարում և շնչառության դժվարացում:

**Եթե մոռացել եք ընդունել Դիագնոստիկ դեղը**

Մի՛ ընդունեք կրկնակի դեղաչափ բաց թողնվածը լրացնելու նպատակով:

Եթե մոռացել եք ընդունել դիագնոստիկ հերթական դեղաչափը, ապա այն պարզապես ընդունեք հաջորդ ընդունման համար նախատեսված ժամին:

**Եթե դադարեցնում եք դիագնոստիկ ընդունումը**

Չի կարելի դադարեցնել դեղի ընդունումը՝ առանց բուժող բժշկի հետ խորհրդակցելու: Դեղի ընդունման դադարեցման անհրաժեշտության դեպքում դեղաչափը պետք է աստիճանաբար նվազեցնել՝ մինչև դեղի ընդունումը ամբողջությամբ դադարեցնելը:

Դեղի ընդունման հանկարծակի դադարեցման դեպքում կարող են ի հայտ գալ ոչ ցանկալի կողմնակի ազդեցություններ, այդ թվում՝ դեպրեսիա, նյարդայնություն, գրգռվածություն, քրտնարտադրություն կամ փորլուծություն: Բարձր դեղաչափերի ընդունման դեպքում երբեմն կարող են ի հայտ գալ շփոթվածություն, ցնցումներ կամ արտասովոր վարք:

Բուժումը պետք է դադարեցնել աստիճանաբար, հակառակ դեպքում, ախտանիշները, որոնց բուժման համար դիագնոստիկ եք ընդունել, կարող են կրկնվել և արտահայտվել ավելի ուժգին, քան նախկինում (վերսկսվող անքնություն և անհանգստություն): Նկարագրվածի զարգացման ռիսկն ավելի մեծ է դեղի ընդունման հանկարծակի դադարեցման դեպքում: Դուք կարող եք զգալ նաև տրամադրության փոփոխություն, տազնապ, անհանգստություն կամ քնի ռիթմի փոփոխություն:

Եթե դեղի ընդունման հետ կապված լրացուցիչ հարցեր ունեք, խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղագետի հետ:

**4. ԻՆՉՊԻՄԻ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ**

Ինչպես բոլոր դեղերը, դիագնոստիկ նույնպես կարող է առաջացնել կողմնակի ազդեցություններ, թեև ոչ բոլոր պացիենտների մոտ դրանք կարող են դրսևորվել:

**Անհապաղ դիմեք բժշկի,** եթե առաջացել է այս ներդիր-թերթիկում նկարագրված կամ այլ կողմնակի ազդեցություն:

**Որոշ կողմնակի ազդեցություններ կարող են ունենալ լուրջ բնույթ, ինչի դեպքում պահանջվում է անհետաձգելի բժշկական օգնություն:**

Ըստ հանդիպման հաճախականության՝ կողմնակի ազդեցությունները դասակարգվում են հետևյալ կերպ.

*Ոչ հաճախ հանդիպող (≥1/1000 մինչև < 1/100)*

Կարող են առաջանալ 1000 պացիենտից մեկի մոտ և ավելի հաճախ, բայց ոչ ավելի՝ քան 100 պացիենտից մեկի մոտ:

- Շնչառության ընկճում (շատ դանդաղ և/կամ մակերեսային շնչառություն):

*Հազվադեպ հանդիպող (≥ 1/10000 մինչև < 1/1000)*

Կարող են առաջանալ 10000 պացիենտից մեկի մոտ և ավելի հաճախ, բայց ոչ ավելի՝ քան 1000 պացիենտից մեկի մոտ:

- Ծնչառության կանգ,
- գիտակցության կորուստ,
- դեղնախտ (մաշկի կամ ակնագնդերի դեղնություն):

*Շատ հազվադեպ հանդիպող (< 1/10000)*

*Կարող են առաջանալ ավելի հազվադեպ, քան 10000 պացիենտից մեկի մոտ:*

Անաֆիլակտիկ ռեակցիա (ավերգիկ սուր ռեակցիա), որն ուղեկցվում է հետևյալ ախտանիշներով՝ հանկարծակի ի հայտ եկած հևոց, շրթունքների, լեզվի, կոկորդի կամ մարմնի այտուց, ցան, ուշաթափություն կամ կլման ակտի դժվարացում:

### **Կողմնակի այլ ազդեցություններ**

*Շատ հաճախ հանդիպող ( $\geq 1/10$ )*

*Կարող են առաջանալ ավելի հաճախ, քան 10 պացիենտից մեկի մոտ.*

- քնկոտություն

*Հաճախ հանդիպող ( $\geq 1/100$  մինչև < 1/10)*

*Կարող են առաջանալ 100 պացիենտից մեկի մոտ և ավելի հաճախ, բայց ոչ ավելի, քան 10 պացիենտից մեկի մոտ.*

- հոգնածություն,
- դեղի հանման համախտանիշ (հնարավոր ախտանշանները տե՛ս 3-րդ բաժնի «Եթե Դուք դադարեցնում եք դիագնոստիկ ընդունումը» մասը),
- շփոթվածություն,
- մկանային շարժումների համակարգման խանգարում (ատաքսիա) և շարժողական այլ խանգարումներ, տրեմոր:

*Ոչ հաճախ հանդիպող ( $\geq 1/1000$  մինչև < 1/100)*

*Կարող են առաջանալ 1000 պացիենտից մեկի մոտ և ավելի հաճախ, բայց ոչ ավելի՝ քան 100 պացիենտից մեկի մոտ.*

- մկանային թուլություն,
- հիշողության կորուստ,
- ուշադրության կենտրոնացման խանգարում,
- վեստիբուլյար խանգարումներ,
- գլխապտույտ,
- գլխացավ,
- հստակ խոսք,
- ստամոքս-աղիքային խանգարումներ, այդ թվում՝ սրտխառնոց, փսխում, փորկապություն, փորլուծություն,
- թքարտադրության ուժեղացում,
- մաշկային ավերգիկ ռեակցիաներ, որոնք արտահայտվում են քորի, մաշկի կարմրության, այտուցի, մաշկային ցանի ձևով:

*Հազվադեպ հանդիպող ( $\geq 1/10000$  մինչև < 1/1000)*

*Կարող են առաջանալ 10000 պացիենտից մեկի մոտ և ավելի հաճախ, բայց ոչ ավելի՝ քան 1000 պացիենտից մեկի մոտ.*

- հոգեկան խանգարումներ, այդ թվում՝ դյուրագրգռություն, նյարդայնություն, անհանգստություն, գրգռվածություն, ագրեսիվություն, հիշողության կորուստ, մոլորվածություն, ցասում, փսիխոզ, մոճավանջներ կամ հայուցինացիաներ: Նշված ազդեցությունները կարող են նաև ծանր ընթացք ունենալ: Այս կողմնակի ազդեցություններն ավելի հաճախ զարգանում են երեխաների և տարեցների մոտ: Անհրաժեշտ է տեղեկացնել բուժող բժշկին:
- զգոնության նվազում,
- դեպրեսիա,
- հույզերի բացակայություն,
- անքնություն,
- սրտի հետ կապված խնդիրներ, այդ թվում՝ սրտի դանդաղ զարկեր (դանդաղասրտություն), սրտային անբավարարություն և սրտի կանգ,

- զարկերակային ճնշման իջեցում, ուշաթափություն,
- թոքերում լորձի արտազատման ուժեղացում,
- չորություն բերանում,
- ախորժակի մեծացում,
- լյարդի որոշ ֆերմենտների մակարդակի փոփոխություն, ինչը հայտնաբերվում է լյարդի հետազոտության արդյունքում,
- միզակապություն, միզապարկի փականի անվերահսկելիություն (անմիզապահություն),
- տղամարդկանց մոտ կրծքագեղձերի մեծացում,
- իմպոտենցիա, սեռական ցանկության (լիբիդո) փոփոխություն,
- արյունաստեղծ համակարգի խանգարումներ (կարող են առաջանալ ցավ կոկորդում, արյունահոսություն քթից կամ վարակներ):

*Շատ հազվադեպ հանդիպող (< 1/10,000)*

*Կարող են առաջանալ ավելի հազվադեպ, քան 10 000 պացիենտից մեկից մոտ.*

- լեյկոցիտների քանակի նվազում (լեյկոպենիա),
- արյան մեջ որոշ ֆերմենտների (տրանսամինազաներ) մակարդակի բարձրացում:

*Անհայտ հաճախականությամբ կողմնակի ազդեցություններ (առկա տվյալների հիման վրա հնարավոր չէ գնահատել հաճախականությունը)*

Ոչ հստակ տեսողություն, կրկնատեսություն և այքերի ակամա շարժումներ: Այս կողմնակի ազդեցություններն անհետանում են դիագնոստիկ ընդունումը դադարեցնելուց հետո:

Դեղի համման համախտանիշի վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս 3-րդ բաժնի «Եթե Դուք դադարեցնում եք դիագնոստիկ ընդունումը» մասում:

### **Կասկածելի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդում**

Կողմնակի ազդեցության ի հայտ գալու դեպքում այդ մասին տեղեկացրեք բժշկին կամ դեղագետին: Սա վերաբերում է նաև այս ներդիր-թերթիկում չնշված որևէ այլ կողմնակի ազդեցությանը: Դուք կարող եք կողմնակի ազդեցության մասին ուղղակիորեն առցանց հաղորդել Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ հետևյալ հղումով. [www.pharm.am](http://www.pharm.am) կամ զանգահարել թեժ գիծ. հեռախոսահամարներ՝ (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05:

Կողմնակի ազդեցությունների մասին հաղորդելով՝ դուք նպաստում եք այս դեղի անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության ապահովմանը:

### **5. ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ԴԻԱԶԵՊԱՄ ԴԵՂԸ**

#### **5 և 10 մգ դեղահատեր**

Դեղը պահեք երեխաների համար անհասանելի և անտեսանելի տեղում:

Դեղը պահեք իր տուփի մեջ՝ 15<sup>o</sup>-25<sup>o</sup>C ջերմաստիճանի պայմաններում, խոնավությունից և լույսից պաշտպանված տեղում:

Դեղի պիտանիության ժամկետը 3 տարի է:

Մի՛ օգտագործեք դեղը տուփի և սրվակի վրա նշված պիտանիության ժամկետի ավարտից հետո: Պիտանիության ժամկետն ավարտվում է նշված ամսվա վերջին օրը:

Դեղերը չի կարելի նետել կոյուղի կամ կենցաղային թափոնների մեջ: Չօգտագործված դեղերի հետ վարվելու մասին հարցրեք դեղագետին: Այս միջոցառումներն ուղղված են շրջակա միջավայրի պահպանությանը:

### **6. ԻՆՉ Է ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԴԻԱԶԵՊԱՄ ԴԵՂԻ ՓԱԹԵԹԸ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ**

#### **Ինչ է պարունակում Դիագնոստիկ դեղը**

**Դիագնոստիկ 5 մգ դեղի յուրաքանչյուր դեղահատ պարունակում է.**

ակտիվ բաղադրատարր՝ դիագնոստիկ 5 մգ,

օժանդակ նյութեր՝ միկրոբյուրեղային ցելյուլոզ, լակտոզայի մոնոհիդրատ, էթիլցելյուլոզ, օսլայի նատրիումի գլիկոլատ, մագնեզիումի ստեարատ:

**Դիագնոստիկ 10 մգ դեղի յուրաքանչյուր դեղահատ պարունակում է.**

ակտիվ բաղադրատարր՝ դիագնոստիկ 10 մգ,

օժանդակ նյութեր՝ միկրոբյուրեղային ցելյուլոզա, լակտոզայի մոնոհիդրատ, էթիլցելյուլոզա, օսլայի նատրիումի գլիկոլյատ, մագնեզիումի ստեարատ:

**Ինչ տեսք ունեն Դիագնոստիկ դեղի դեղահատերը և ինչ է պարունակում փաթեթը**

Դիագնոստիկ 5 մգ՝ սպիտակ, գլանաձև, մի կողմում բաժանման գծիկով, մյուս կողմը հարթ մակերեսով դեղահատեր:

Դիագնոստիկ 10 մգ՝ սպիտակ, գլանաձև, մի կողմում բաժանման գծիկով, մյուս կողմը հարթ մակերեսով դեղահատեր:

24 դեղահատ պարունակող 1 բլիստերը տեղադրված է սովորաբար տուփի մեջ՝ ներդիր-թերթիկի հետ միասին:

**Դեղատնից բաց թողնելու կարգ**

Դեղատոմսով

**Գրանցման հավաստագրի իրավատեր**

«ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ

Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2204, 2-րդ միկրոշրջան, տուն 19

Հեռ.՝ 374 (222) 21703, 21740

Ֆաքս՝ 374 (222) 21924

**Արտադրող**

«ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ

Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2204, 2-րդ միկրոշրջան, տուն 19

Հեռ.՝ 374 (222) 21703, 21740

Ֆաքս՝ 374 (222) 21924

**Ներդիր-թերթիկի վերջին վերանայման ամսաթիվը**